

Խմբագրական Սփիռոքի վերակազմակերպման հրամայականը

Ապրիլին Փարիզի մէջ կայացած Սփիւռքի ազգային զօրաշարժի խորհրդածողովի նոր կայքէջին գործարկումը եւ այնտեղ համաժողովի չորս կողմ սեղաններու համառոտագրութիւններու հրապարակումը պատեհ շարժառիթ մըն է՝ ոչ միայն վերադառնալու հոն հնչած մտքերուն, այլ նաեւ շարունակելու Սփիւռքի քաղաքական, հաստատութեանական եւ ռազմավարական ապագայ դերակատարութեան աւելի լայն քննարկումը:

Խորհրդածողովը ժամանակին եւ արժէքաւոր նախաձեռնութիւն մըն էր: Ան մէկ հարթակի վրայ համադրեց տարբեր փորձառութիւններ եւ տեսակէտներ՝ Սփիւռքի վերակազմակերպման, Հայաստան–Սփիւռք յարաբերութիւններու, ինքնութեան, քաղաքական պատասխանատուութեան եւ երկրաքաղաքական ազգային ռազմավարութեան շուրջ: Սակայն անոր իսկական արժէքը պիտի չափուի քննարկումներու շարունակութեամբ եւ անոնց գործնական հետեւանքներով:

Սփիւռքի գլխաւոր խնդիրը այսօր միջոցներու, տաղանդի կամ ներուժի պակասը չէ: Անոր հիմնական մարտահրաւէրը ցրուած ներուժը հետեւողական հաւաքական ուժի վերածելու բաւարար մեքենականութիւններու բացակայութիւնն է: Դպրոցները, եկեղեցիները, մշակութային հաստատութիւնները, քաղաքական ու իրաւական գործունէութիւնը, մասնագիտական ցանցերը եւ երիտասարդական ներգրաւումը միասին կը կազմեն հայկական հաւաքական ուժի ենթակառուցը:

Այս շրջագիծին մէջ առանցքային է Սփիւռքի ինքնուրոյնութիւնը: Ինքնուրոյն Սփիւռքը Հայաստանէն անջատուած Սփիւռք չի նշանակեր: Ընդհակառակը՝ սեփական դիրքորոշումներ ձեւաւորելու եւ ինքնուրոյն գործելու կարող Սփիւռքը կրնայ Հայաստանի ռազմավարական կարեւոր հարստութիւններէն մէկը ըլլալ: Հաւատարմութիւնը հայկական պետականութեան չի նշանակեր ենթարկուել օրուան իշխանութեան կամ սեփական դիրքորոշումները պայմանաւորել Հայաստանի ներքաղաքական վերիվայրումներով: Կառավարութիւնները կը փոխուին, ազգային շահերն ու պատմական պատասխանատուութիւնները՝ ոչ:

Արցախը այս տարբերութեան ամենացայտուն փորձաքարերէն է: Վերադարձի իրաւունքը, հայ գերիները, մշակութային ժառանգութիւնը եւ այլ հարցեր չեն կրնար դուրս գալ համազգային օրակարգէն միայն այն պատճառով, որ նուազ ներկայ են Հայաստանի պաշտօնական դիւանագիտութեան մէջ:

Նոյնքան էական է ինքնութեան պահպանումը: Լեզուն, կրթութիւնը, պատմական յիշողութիւնը, մշակոյթն ու հաստատութեանական կեանքը ազգային կենսունակութեան հարցեր են, իսկ Հայ Առաքելական եկեղեցին կը շարունակէ մնալ Սփիւռքի ինքնութեան ու կազմակերպ համայնքային կեանքի առանցքային սիւներէն մէկը:

Սակայն ինքնուրոյնութիւնը պէտք չէ չփոթել մասնատուածութեան հետ: Սփիւռքի ուժը կը կայանայ ինքնավար, բայց փոխկապակցուած եւ համատեղ գործելու ընդունակ ըլլալուն մէջ: Այս առումով անլոյծ կը մնայ նաեւ քաղաքական ներկայացուցչութեան հարցը՝ ո՞վ կը խօսի Սփիւռքի անունով եւ ի՞նչ օրինականութեամբ:

Ուստի խնդիրը հին Հայաստան–Սփիւռք յարաբերութիւնը վերականգնելը չէ, այլ 21-րդ դարու նոր գործընկերութիւն մը ստեղծելը՝ փոխադարձ յարգանքի, մասնակցութեան, ինքնուրոյնութեան եւ ընդհանուր պատասխանատուութեան հիման վրայ:

Հայութիւնը համաժողովներու ու ախտորոշումներու պակաս չէ ունեցած: Այժմ հարցը այն է, թէ ի՞նչ կու գայ քննարկումէն ետք: Մասնագիտական ու դիւանագիտական ցանցերը, կրթական նախաձեռնութիւնները, կայուն ֆինանսաւորումը եւ ներկայացուցչական կառույցները պէտք է վերածուին գործնական օրակարգի:

Իսկ ամէն ռազմավարութեան չափանիշը նոր սերունդն է: Եթէ երիտասարդը լեզու, գիտելիք, պատասխանատուութիւն, առաջնորդելու առիթ եւ քաղաքական մասնակցութեան դաշտ չունի, մնացեալ բոլոր ծրագրերը ժամանակաւոր են:

Նոր հրապարակուած ամփոփումները, հետեւաբար, պէտք չէ դիտել որպէս խորհրդածողովի եզրափակիչ հանգրուան: Անոնք պէտք է մեկնարկը ըլլան գործնական նոր փուլի մը, ուր քննարկումները կը վերածուին կազմակերպուած նախաձեռնութիւններու, իսկ նախաձեռնութիւնները՝ երկարաժամկէտ գործողութեան:

Հոն բարձրացուած հարցերն ու գաղափարները արժանի են աւելի խոր քննութեան, եւ անոնց պիտի վերադառնանք հետագայ մեկնաբանութիւններով ու վերլուծութիւններով: Սփիւռքի ապագային վերաբերող այս հարցերը չափազանց հիմնարար են՝ մէկ խորհրդածողովով կամ մէկ խմբագրականով սպառելու համար:

ԳՈՅԺ Ընկեր Եդուարդ Ֆրունճեան

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն խոր վիշտով կը գումէ իր շրջանի վաստակաւոր ընկերներէն, Կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, հաւատաւոր ու նուիրեալ գաշակցական ընկ. Եդուարդ Ֆրունճեանի մահը, որ պատահեցաւ շաբաթ, 29 օգոստոս 2026-ի առաւօտեան, Մոնթրէալի մէջ:

Ընկ. Եդուարդ Ֆրունճեան տասնամեակներ շարունակ իր գործուն մասնակցութիւնը բերաւ ՀՅ Դաշակցութեան կազմակերպական եւ ազգային–հասարակական կեանքին՝ հաւատարմօրէն ծառայելով կուսակցութեան գաղափարական արժէքներուն եւ ազգային առաքելութեան:

Իր երկարամեայ գործունէութեան ամբողջ ընթացքին, ոչ մէկ ճիգ խնայեց ՀՅԴ-ի առաքելութեան յառաջխաղացքին, կազմակերպական կառույցներու ամրապնդումին եւ գանատահայ համայնքի զարգացումին համար:

Ընկ. Եդուարդ Ֆրունճեան իր ետին կը թողու նուիրումի, ծառայութեան եւ գաղափարական հաւատարմութեան արժանաւոր վաստակ մը: Անոր յիշատակը պիտի մնայ վառ իր գաղափարակից ընկերներուն եւ բոլոր անոնց մօտ, որոնք տարիներու ընթացքին առիթը ունեցած են գործակցելու եւ ծառայելու իր կողքին:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ ընկ. Եդուարդ Ֆրունճեանի ընտանիքին, հարազատներուն եւ գաղափարակից ընկերներուն:

ՀՅԴ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Փաշինեան-Ալիեւ հանդիպում Գերիներու եւ Արցախի հարցերը՝ դուրս Առեստուրն ու TRIPP-ը՝ օրակարգին վրայ



Կարդալ էջ 4

BEFORE YOU REPLACE THEM

REJUVENATE THEM.

Don't buy new when your hearing aids can sound new again.

REVIVE

Deep Clean & Restore

RENEW

Calibrate & Optimize

REJUVENATE

Hear Like New

hearing aid source

hearing instrument specialists

hearingaidsource.ca

hello@hearingaidsource.ca

NEVER WORN HEARING AIDS BEFORE? NOT SURE WHERE TO START?

If your hearing isn't as clear as it used to be, or you're exploring hearing aids for the first time, we offer free hearing tests to assess your hearing. Our team provides clear, professional guidance so you feel confident and supported from your first appointment.



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Մոնթրեալի մէջ տեղի ունեցաւ «Բարեւ... Ես գիրքն եմ» դասագիրքին շնորհանդէսը



ՄՈՆԹՐԷԱԼ.– Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գեղշ. Տէր Բարգէն Արք. Չարեանի, կազմակերպութեամբ Գանատայի Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան բաժանմունքին, հինգշաբթի, 20 օգոստոս 2026–ին, երեկոյեան ժամը 7:00–ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի հրատարակութիւններէն «Բարեւ... Ես գիրքն եմ» դասագիրքի շնորհանդէսը, ներկայութեամբ Հայաստանէն յատկապէս այս առթիւ ժամանած գիրքին հեղինակ Նայիրի Մկրտիչեանի, Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հովիւ Արժ. Տէր Գառնիկ Աւ. Քհն. Գոյունեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ բժշ. Ժիրայր Պասմաճեանի, Բաստրմաճեան Հիմնադրամի ներկայացուցիչ Նուշիկ Էլոյեանի, Ազգային վարչութեան ատենապետ Ծովիկ Թերզեանի եւ անդամներ՝ Թորոս Պապիկեանի, Համբիկ Գարայեանի եւ Յակոբ Պուլկարեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի եւ անդամ Նորա Արուշեանի, ՀՕՄ–ի Կեդրոնական վարչութեան Գանատայի ներկայացուցիչ Արմինէ Կարապետեանի եւ Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Լիւսի Շահինեանի, Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Թամար Շահինեանի եւ անդամ Անահիտ Պալեանի, պատկան մարմիններու եւ ուղեկից միութիւններու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ գրասէր ու ընթերցասէր բազմութեան մը։

Հայեցի Դաստիարակութեան բաժանմունքին անունով բարի գալուստի խօսք արատասանեց յանձնախումբի անդամ Լուսին Ժամկոչեան, որ իր խօսքը սկսաւ այսպէս. «Շնորհաշուք տրիկին Նայիրին, Կատարեց շնորհալի գործ մը։ Գրեց «Բարեւ... ես գիրքն եմ» դասագիրքը, Որուն համար շնորհապարտ պիտի ըլլան Մեր շնորհալի փոքրիկներն ու պատանիները։ Այսօր եկած ենք այս շնորհանդէսին, Շնորհակալութիւն յայտնելու այս գրքի հեղինակին։ Շնորհակալութիւն յայտնելու նաեւ մեր շնորհատու սրբազանին եւ առաջնորդարանի շնորհազարդ ընտանիքին, Որոնց շնորհիւ ունեցանք այս Գիրքը շնորհալի»։

Ժամկոչեան նշեց. «Անցնող տարիներուն Սրբազան Հօր հովանաւորութեամբ եւ Հայեցի Դաստիարակութեան բաժանմունքին ջանքերով կարելի եղան լոյս աշխարհ բերել մանկապատանեկան գրքոյկներ, գիրքեր եւ տեսերիզներ, ինչպէս նաեւ կազմակերպել դաստիարակչական աշխատանոցներ եւ տաղանդներու յայտնաբերման մրցոյթներ», ապա աւելցուց, որ գիրքին հեղինակը առիւծի բաժին ունեցած է այս աշխատանքներուն նպատակներու իրագործման ի խնդիր։

Տեղի ունեցան գիրքէն երկու գրուագներու ներկայացում. «Սանասարն ու Պաղտասարը» եւ «Տորք Անգեղը», զորս ներկայացուցին Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի աշակերտներ Տարօն Թիւֆէնքճեան, Ալեք Գաբրիէլեան եւ Կասիա Մկրտիչեան։ Հեղինակին ամփոփ կենսագրութիւնը ներկայացուց Գառնի Մարտիրոսեան, որմէ ետք գիրքին հեղինակը ներկայացուց դասագիրքը՝ սալիկներու ցուցադրութեամբ։

Մկրտիչեան նախ հանդէս եկաւ շնորհակալական խօսքով, որմէ ետք ներկայացուց գիրքին պատրաստութեան տուն տուող պատճառներուն, տպագիր գիրքի կարեւորութեան, գիրքին բովանդակութեան՝ նշելով որ գիրքին մէջ տեղ գտած են այն հիմնական եւ տարրական տեղեկութիւնները, զորս իւրաքանչիւր հայ պէտք է գիտնայ իր ինքնութեան մասին, անկախ տարիքային նկատառումներէ։ Ան նաեւ յիշեց, թէ հայոց պատմութեան հիմնական գրուագներու ներկայացման ձեւը սովորական դասագիրքի չի նմանիր, այլ ընտրած է իւրաքանչիւր ոճ, առաւել հետաքրքրական եւ գիւրդնկալ դարձնելու նիւթն ու տեղեկութիւնները։ Ան նաեւ նշեց, թէ գիրքը չի բաւարարուիր գիտելիքներ փոխանցելով, այլ կը բովանդակէ գանազան խաղեր, որոնք կ'ամրապնդեն փոխանցուած գիտելիքը։ Հեղինակը նաեւ յիշեց, որ գիրքէն օրինակներ դրկուած են Սփիւռքի գանազան գաղթօճախներ, ինչպէս՝ Աւստրալիա, Գերմանիա, Հոլանտա, Սուրիա, Լիբանան, Թուրքիա, Ամերիկա, Շուէտ եւ այլուր, ծախուած են Արեւելեան եւ Արմտեան ԱՄՆ, եւ հետաքրքրութիւն ցուցաբերուած է Պոլսէն եւ Հոլանտայէն։

Սրբազան Հայրը իր սրտի խօսքը փոխանցեց նախ յիշելով Առաջնորդարանի երկարամեայ գործակցութիւնը գիրքին հեղինակին հետ, յատկապէս Շողան ծրագրին, որ կրօնական եւ ազգային թեմաներով արեւմտահայերէն մանկական տեսերիզներու պատրաստումն էր, ապա սոյն գիրքին հրատարակութեան։ Ան գրուատեց Մկրտիչեանին ժրջան աշխատանքն ու արեւմտահայերէնին, ինչպէս նաեւ ազգային դաստիարակութեան հանդէպ ցուցաբերած նախանձախնդրութիւնը, ապա աւելցուց, թէ յոյսով է, որ մեր դպրոցները՝ ամէնօրեայ, շաբաթօրեայ թէ կիրակնօրեայ, մեր ուսուցիչներն ու աշակերտները, ինչպէս նաեւ մեր ծնողները հետաքրքրութիւն կը ցուցաբերեն այս գիրքին հանդէպ եւ կ'օգտուին անկէ՝ մեր մատղաշ սերունդին ազգային ու կրօնական դաստիարակութիւն ջամբելու։ Աւարտին տեղի ունեցաւ հեղինակին կողմէ մակադրուած գիրքերու վաճառք։

ՍՈՒՍԱ ԹԻԹԻԶԵԱՆ ԿԷՏԻԿԵԱՆ

ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի յայտարարութիւն

Սփիւռքի եւ համահայկական կառոյցներու դէմ նոր–պոլշեիկեան արշաւի սաստկացում

ԵՐԵՒԱՆ.– Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը ստանձնած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը կը շարունակէ ՀՀ Սահմանադրութեան եւ օրէնքներու խախտումով ազգային արժէքները թիրախաւորել, ներազգային պառակտումը խորացնել եւ իր ապագային քաղաքականութիւնը սաստկացնել, որ առարկայօրէն կը ծառայէ թշնամի երկիրներուն ծրագրներուն։

2026–ի ՀՀ Ազգային ժողովի ընտրութիւններուն առիթով իր որդեգրած նախընտրական ծրագրին մինչեւ ՀՀ Ազգային ժողովին ներկայացուած իր 2026–2031 թուականներու ծրագիրը, եւ այդ միջոցին իր տարբեր ներկայացուցիչներուն կողմէ կատարուած յայտարարութիւններով, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը ՀՀ իշխանութիւնը, այս պարագային ինքն իրեն, կը նոյնականացնէ Հայաստանի Հանրապետութեան հետ, ճիշդ այնպէս ինչպէս ժամանակին պոլշեիկները կ'ընէին։ Անտեսելով այն փաստը, որ խնդրալարոյց վերջին ընտրութիւններուն, քուէարկութեան մասնակցած ՀՀ քաղաքացիներուն կէսէն աւելի իր դէմ քուէարկած է, ՔՊԿ–ն կը յամառի յայտարարել, որ «եթէ մեզի հետ չէք» ուրեմն Հայաստանի Հանրապետութեան դէմ էք» եւ կը շարունակէ շարժիլ այդ տրամաբանութեամբ։

Ընտրութիւններէն անմիջապէս ետք, շատ արագ, ՔՊԿ–ն սահմանափակեց ՀՀ քուէարկողներու իրաւունքները։ Ապա նոյն պոլշեիկեան ոճով կրկնեց, որ սփիւռքի մէջ կան «հակապետական» եւ «պետականամէտ» շրջանակներ։

Կառավարութեան 2026–2031 ծրագրին մէջ ներառեց ազգութեամբ հայերու ՀՀ քաղաքացիութիւն ստանալու գործընթացը դժուարացնելու եւ «Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի հեռացում»ի նպատակները։

«Իրական Հայաստան»ի «գաղափարախօսութեան» հիման վրայ եւ սխալ գնահատումով, նաեւ զիրար հակադրեց հայրենիքի եւ սփիւռքի հօգրացումը։

Վերջին շաբաթներուն, ընդհանրապէս սփիւռքը եւ յատկապէս ՀՅԴ Հայ Դատի համակարգը թիրախաւորելը ՔՊԿ–ական ներկայացուցիչներուն կողմէ՝ ակամայ խոստովանութիւն է, որ այդ համակարգը արդիւնաւէտ ձեւով կը գործէ, եւ իր օրակարգը միջազգային հանրութեան ուշադրութեան կ'արժանանայ։ Այս արդիւնաւէտութենէն դժգոհ եղած են եւ կը շարունակեն դժգոհիլ նախ եւ առաջ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան գլխաւոր սպառնալիք հանդիսացող Թուրքիան եւ Ատրպէյճանը։ ՔՊ կուսակցութիւնը, ըստ երեւոյթին, որոշած է այս պարագային եւս ձայնակցիլ այդ երկուքին։

ՔՊ կուսակցութեան իշխանութիւնը, նոր–պոլշեիկեան ոճով, մէկ կողմէ կը պնդէ, որ ինք միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու շահերը պաշտպանելու առաքելութիւն ունի, միաժամանակ պահանջելով, որ ամբողջ աշխարհասփիւռ ազգը հետեւի իր քաղաքական ուղեգծին։

Խեղաթիւրումները դադրեցնելու յաւելեալ ճիգով՝ արձանագրենք ՀՅԴ Հայ Դատի համակարգին առաջնահերթութիւնները.

Ա) Արցախի եւ արցախցիներու բոլոր իրաւունքներու պաշտպանութիւն, իր բոլոր ստորոգելիներով, Ատրպէյճանի յանցագործութիւնները պատժելն մինչեւ վերադարձի իրաւունք եւ ինքնորոշում.

Բ) Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ամրապնդումին աջակցութիւն.

Գ) Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչում, դատապարտում եւ հատուցումներ.

Դ) Երիտասարդներու պատրաստութիւն հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան՝ Հայ Դատի համար պայքարին։

ՀՅԴ Հայ Դատի համակարգը իր վերոյիշեալ նպատակներուն համար կրնայ պարբերաբար փոխել շեշտադրումները, պատշաճեցնել մարտավարութիւնը պահի պայմաններուն համապատասխան, բայց միշտ նոյն վճռակամութեամբ եւ հետեւողականութեամբ պիտի շարունակէ պայքարը։

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, 27 օգոստոս 2026

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

ՀՕՄ–ի Կեդրոնական վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ վաստակաշատ ընկերուհի Մարօ Ֆրունճեանին, իր կողակցին՝ ընկեր Եղուարդ Ֆրունճեանի մահուան առիթով։

Այս տխուր առիթով՝ ՀՕՄ–ի Կեդրոնական վարչութիւնը կը վշտակցի ընկերուհի Մարոյին եւ Ֆրունճեան ընտանիքին անդամներուն, առ Աստուած աղօթելով, որ մխիթարութիւն պարգեւէ բոլորին։

ՀՕՄ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

«Հորիզոն» Մետիայի խմբագրութիւնն ու աշխատակազմը ի խորոյ սրտէ կը շնորհաւորեն աշխատակազմի անդամ Պետիկ Արզուհալճեանը՝ անդրանիկ մանչ զաւակով մը բախտաւորուելուն ուրախ առթիւ։

Փաշինեան-Ալիեւ հանդիպում Գերիներու եւ Արցախի հարցերը՝ դուրս Առետուրն ու TRIPP-ը՝ օրակարգից վրայ

ՊԻՇՔԷՔ.- Նիկոլ Փաշինեան եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ Պիշքէքի մէջ հանդիպում ունեցած են՝ քննարկելով TRIPP–ի իրականացու–մը, սահմանազատման գործընթացը, երկկողմ առեւ–տուրն ու տնտեսական համագործակցութիւնը։

Հանդիպումէն ետք հայկական եւ ատրպէյճա–նական կողմերը հրապարակած են գրեթէ նոյնաբո–վանդակ հաղորդագրութիւններ, ինչ որ անգամ մը եւս ցոյց կու տայ երկու իշխանութիւններու կողմէ բանակցային գործընթացը հնարաւորինս համաձայ–նեցուած հանրային ձեւակերպումներով ներկայաց–նելու միտումը։

Հայաստանի կառավարութեան հաղորդագրու–թեան համաձայն՝ Փաշինեան եւ Ալիեւ քննարկած են TRIPP–ի իրականացման առնչուող յետագայ գործնական քայլերը եւ ընդգծած՝ ծրագրի շրջա–գիծին մէջ հաղորդակցութեան ու փոխկապակցուա–ծութեան նախագիծերուն կարեւորութիւնը։

Երկու դեկավարները նաեւ անդրադարձած են Հայաստան–Ատրպէյճան պետական սահմանի սահ–մանազատման գործընթացին՝ կարեւոր նկատելով համապատասխան պետական յանձնաժողովներուն աշխատանքը շարունակելու անհրաժեշտութիւնը՝ երկու երկիրներուն միջեւ ձեռք բերուած պայմանա–ւորուածութիւններուն հիման վրայ։

Կողմերը համաձայնած են շարունակել անմի–ջական երկկողմ շփումները՝ «տեւական խաղաղու–թեան ամրապնդման, միջպետական յարաբերու–թիւններու կարգաւորման եւ կապակցուածութեան ընդլայնման» նպատակով։

Ուշագրաւ է, սակայն, որ հրապարկուած հա–ղորդագրութեան մէջ որեւէ յիշատակում չկայ Ատր–պէյճանի մէջ պահուող հայ գերիներուն եւ քաղա–քական բանտարկեալներուն, Արցախի հայութեան վերադարձի իրաւունքին, հայկական մշակութային ժառանգութեան պահպանութեան կամ անվտան–գային այն խնդիրներուն մասին, որոնք կը շարու–նակեն մնալ Հայաստան–Ատրպէյճան յարաբերու–թիւններու առանցքային եւ չլուծուած հարցերուն շարքին։

Փոխարէնը, հաղորդագրութեան զգալի բաժի–նը նուիրուած է առեւտրային եւ տնտեսական հա–մագործակցութեան հեռանկարներուն։ Նշուած է, որ ատրպէյճանական նաւթամթերքի արտահանու–մը Հայաստան, հացահատիկի եւ երրորդ երկիրներէ ծագող այլ ապրանքներու՝ Ատրպէյճանի տարած–քով Հայաստան տարանցումը, ինչպէս նաեւ երկու երկիրներուն միջեւ առեւտրային յարաբերութիւն–ներու հաստատումը ներկայացուած են իբրեւ խա–ղաղութեան ամրապնդման «գործնական դրսեւո–րումներ»։

Փաշինեան եւ Ալիեւ նաեւ ողջունած են եր–կու երկիրներու գործարար շրջանակներուն միջեւ շփումները եւ քննարկած տնտեսական, առեւտրա–յին ու ուժանիւթային համագործակցութեան հետա–գայ ընդլայնման հնարաւորութիւնները։

Այսպիսով, հանդիպումի պաշտօնական օրա–կարգին մէջ տնտեսական կապերու խորացումը կրկին առաջնային դիրք զբաղեցուցած է, մինչդեռ հայ հանրութեան համար կենսական նշանակութիւն ունեցող քաղաքական, մարդասիրական եւ անվ–տանգային շարք մը հարցեր առնուազն հրապարա–կային հաղորդագրութեան մէջ ամբողջովին դուրս մնացած են։

Հանդիպման մաս կազմած են նաեւ Հայաստա–նի եւ Ատրպէյճանի փոխվարչապետներ Մհեր Գրի–գորեան եւ Շահին Մուստաֆաեւ, արտաքին գոր–ծոց նախարարներ Արարատ Միրզոյեան եւ Զէյհուն Պայրամով, ինչպէս նաեւ երկու երկիրներու այլ բարձրաստիճան պաշտօնատարներ։

Փաշինեան եւ Ալիեւ խրխրդիստան ժամանած են՝ մասնակցելու Պիշքէքի մէջ կայացող Շան–հայի համագործակցութեան կազմակերպութեան գագաթնաժողովի ՇՀԿ+ ձեւաչափի հանդիպումին եւ անոր ծիրին մէջ նախատեսուած միջոցառումներուն։

Հայաստանի կառավարութիւնը աւելի կանուխ տեղեկացուցած էր, որ Փաշինեան հանդիպումներ պիտի ունենայ նաեւ օտարերկրեայ գործընկերներու հետ։ Կը սպասուի նաեւ անոր հանդիպումը Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ, որ պիտի ըլլայ Փաշինեան–Փութին առաջին հանդիպումը Հայաս–տանի վերջին խորհրդարանական ընտրութիւններէն ետք։

«Ամբոխային տրամաբանութեան» մոլորութիւնը եւ պայքարի անխուսափելիութիւնը (Քրիստափոր Միքայէլեանի մահուան 122-րդ տարելիցի առիթով)

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր–ներից, կուսակցութեան գաղափարական հայր Քրիստա–փոր Միքայէլեանի մտաւոր ժառանգութիւնը հայ քա–ղաքական մտքի մէջ առանձնայատուկ տեղ է զբաղեց–նում ոչ միայն իր ժամանակի յեղափոխական պայքարի գաղափարական հիմնաւորումը տալու, այլեւ՝ պատմա–կան գործընթացների ներքին տրամաբանութիւնը բա–ցայայտելու առումով։ Նրա «Ամբոխային տրամաբանու–թեան» եւ «Յարատեւ կուռի» տեսութիւնները ձեւաւոր–ուել են հայ ժողովրդի գոյաբանական սպառնալիքի եւ ազգային–ազատագրական պայքարի վերելքի պայման–ներում, սակայն դրանց արժէքը չի սահմանափակոււմ այդ պատմական միջավայրով եւ ժամանակաշրջանով։

Դրանք ներկայացնում են մի ամբողջական եւ գաղափարականօրէն կուռ աշխարհահայեացք, որը միա–ւորում է՝ պատմութեան փիլիսոփայութիւնը, քաղաքա–կան իրատեսութիւնը եւ ազգային ինքնապաշտպանու–թեան գաղափարը։ Այս տեսութիւնները, երբ դիտարկ–ւում են ոչ թէ հատուածաբար, այլ՝ ամբողջութեան մէջ, ցոյց են տալիս, որ Քրիստափորը ձգտում էր ձեւակերպել մի համակարգ, որի միջոցով հնարաւոր է հասկանալ ոչ միայն անցեալի ողբերգութիւնները, այլեւ՝ իմաստաւորել ներկան եւ ուղղորդել ապագան։

Միքայէլեանն իր վերլուծութիւնը սկսում է նրանից, ինչը նա անուանում է «ամբոխային տրամաբանութիւն»։ Նրա դիտարկմամբ՝ «ամբոխը...տրամադիր է կարծելու, թէ ամէն մի երեւոյթ, որին հետեւում է մի ուրիշը, պատճառն է այդ հետագայ երեւոյթի»։ Առաջին հայեացքից պարզ թուացող այս ձեւակերպումն իրականում բացայայտում է քաղաքական մտածողութեան ամենախորքային աղա–ւաղումներից մէկը։ Մարդկային գիտակցութիւնը յաճախ ձգտում է պարզեցնել իրականութիւնը՝ բարդ երեւոյթ–ները յանգեցնելով հեշտ ընկալելի կապերի։ Սակայն այս պարզեցումը վերածւում է վտանգաւոր մոլորութեան, երբ այն օգտագործւում է պատմական իրադարձութիւննե–րը բացատրելու համար։ Քրիստափորը ցոյց է տալիս, որ նման մտածողութիւնը ոչ միայն սխալ է, այլեւ նպատա–կաուղղուած կերպով շահարկում է հասարակութեանը մոլորեցնելու եւ իրականութիւնն աղաւաղելու համար։

Երբ հանրայնացւում է այն միտքը, թէ՛ «հայ յե–ղափոխութիւններն են հայկական սոսկալի կոտորածների պատճառը», մենք գործ ունենք ոչ թէ փաստերի վերլու–ծութեան, այլ կեղծ տրամաբանութեան հետ։ Միքայէլեա–նը բացայայտում է այս պնդման ներքին սնանկութիւնը՝ ցոյց տալով, որ այն անտեսում է իրական, խորքային պատճառները։ Նրա համար պատմական ողբերգութիւն–ները չեն կարող բացատրուել մէկ կամ մի քանի արտաքին դրուագներով, քանի որ դրանք արդիւնք են երկարատեւ գործընթացների, որոնք ձեւաւորուել են քաղաքական, տնտեսական եւ աշխարհաքաղաքական գործօնների հա–մադրման շնորհիւ։ «Սուլթանական կառավարութիւնը հայերի ջնջման ձգտելու համար ունէր աւելի խորին շար–ժառիթներ, քան յեղափոխական ձեռնարկներն են»։ Այս միտքը ոչ միայն պատմական ճշմարտութեան արձա–նագրում է, այլեւ մեթոտաբանական ուղեցոյց՝ փաստելու համար, որ նման հարցերին պէտք է մօտենալ խորքա–յին, համակարգային պատճառների լոյսի ներքոյ, այլ ոչ թէ՛ մակերեսային առիթների կամ պատրուակների վրայ հիմնւելով։ Այս տեսակէտը յստակ կերպով հակադրւում է «ամբոխային տրամաբանութեան» պարզեցուած սխե–մաներին, որոնք յաճախ ծառայել են հասարակութեանը մոլորեցնելու եւ իրականութիւնն աղաւաղելու։

Այս համատեքստում Քրիստափորը կատարում է կարեւոր տարբերակում՝ արտաքին երեւոյթների եւ ներ–քին պատճառների միջեւ։ Նրա համար պատմութիւնը չի գործում պատահականութեան սկզբունքով, այլ ունի իր ներքին օրինաչափութիւնները։ Այդ պատճառով էլ նա մերժում է «առիթ» հասկացութեան գերազնահատումը եւ այն ներկայացնում է որպէս երկրորդական գործօն։ Նրա ձեւակերպած չորս դրոյթները, որոնք կարելի է դիտար–կել որպէս պատմական մտածողութեան հիմունքներ, արտայայտւում են այս կերպ՝ առաջին. «Երբ կան հիմ–նական պատճառներ՝ որեւէ երեւոյթի առաջ գալու հա–մար, առաւել ակնհերձ «առիթի» էլ երեւոյթը արդբանում է»։ Երկրորդ. «Երբ չկան հիմնական պատճառներ, նոյ–նիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում»։ Երրորդ. «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրուակ» երբեք չեն պակասի»։ Չոր–րորդ. «Երբ կան հիմնական պատճառներ, դրանց դէմ կուռող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կա–րող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուեն»։ Այս դրոյթները ցոյց են տալիս, որ պատմա–կան գործընթացներն ունեն ինքնուրոյն տինամիքա, որը կախուած չէ առանձին իրադարձութիւններից, եւ ընդգ–ծում են, որ իրական պատճառներն ու հետեւանքները յա–ճախ տարբերւում են այն պարզեցուած կապերից, որոնք

տարածուած են ամբոխային մտածողութեան մէջ։

Նոյն տրամաբանութեամբ նա նշում է, որ՝ «Երբ չկան հիմնական պատճառներ, նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում»։ Այսինքն արտաքին ցնցումները չեն կարող ստեղծել այն, ինչի հա–մար հիմք չկայ։ Սակայն առաւել կարեւոր է նրա երրորդ դրոյթը. «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրուակ» երբեք չեն պակասի»։ Այս միտքն ուղ–ղակիօրէն հակադրւում է այն մտածողութեանը, որը կոչ է անում զսպուածութեան՝ «առիթ չտալու» համար։ Մի–քայէլեանը ցոյց է տալիս, որ նման մօտեցումը հիմնուած է իրականութեան սխալ ըմբռնման վրայ։ Եթէ ճնշող ուժն ունի նպատակ եւ զբաղպատճառներ, ապա նա միշտ կը գտնի պատրուակ իր գործողութիւններն արդարացնելու համար։ Հետեւաբար պայքարից հրաժարուելը չի կան–խում վտանգը, ընդամէնը վերացնում է դիմադրութիւնը։

Քրիստափորը չի ներկայացնում պայքարը որ–պէս ցանկալի կամ նախընտրելի տարբերակ, այլ՝ որպէս անխուսափելի հետեւանք։ Հայ ժողովուրդը, նրա ձեւա–կերպմամբ, կանգնած էր «կա՛մ անպայման բնաջնջում... կա՛մ կեանք» երկընտրանքի առջեւ։ Այս պատկերացու–մը վերացնում է միջանկեալ լուծումների պատրանքը եւ ցոյց է տալիս, որ պայքարը բխում է գոյութեան պահան–ջից։ Նա մերժում է այն գաղափարը, թէ կարելի է հասնել ազատութեան առանց դիմադրութեան՝ դա համարելով պատմական փորձով չհաստատուած մօտեցում։

Նրա համար պայքարն ունի ոչ միայն քաղաքական, այլ նաեւ բարոյական հիմք։ «Որեւէ ազգ պարտաւոր չէ անպատճառ հաշտուել ամենադաժան ստրկութեան հետ»։ Այս միտքը հաստատում է, որ ազատութեան ձգտումը բնական է եւ օրինական։ Ազգը, որը հրաժարւում է պայ–քարից, ոչ միայն կորցնում է իր իրաւունքները, այլեւ վտանգում է գոյութիւնը։ Այսպիսով, պայքարը դառնում է ինքնապաշտպանութեան ձեւ, որն արդարացուած է ոչ միայն գործնական, այլեւ բարոյական առումով։

Սակայն Միքայէլեանի մտածողութիւնը չի սահ–մանափակւում պայքարի անհրաժեշտութեան հաստատ–մամբ։ Նա փորձում է նաեւ սահմանել դրա բնոյթը եւ ռազմավարութիւնը։ Այստեղ է, որ ձեւակերպւում է «Յա–րատեւ կուռի» տեսութիւնը։ «Յարատեւ կռիւ, յաճախ եւ երկար ժամանակ գուցէ անյաջող, չնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալի. ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին։ Պահպանենք, շարունակենք կռիւը, որպէսզի լայնանայ, ընդարձակուի եւ ընդարձակուելով յարատեւի. ահա դէ–պի մեր նպատակը տանող միակ ճանապարհը։ Չչեղուենք այդ ճանապարհից, որ պատճառների եւ հետեւանքնե–րի կապակցութեամբ ունի պատմութեան մէջ հաստատ–ուած օրէնքի ուժ։ Չչեղուենք այդ միակ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի դրաւիչ ծաղիկներով»։ Այս միտքը կտրուկ հակադրւում է արագ յաղթանակնե–րի սպասման տրամաբանութեանը։ Քրիստափորի համար պայքարը գործընթաց է, որը պահանջում է՝ ժամանակ, յամուռութիւն եւ կազմակերպուածութիւն։

Նա նաեւ կարեւորում է այն, որ պայքարը չի կա–րող լինել անխալ։ Յետագարձ գնահատականները, ըստ նրա, յաճախ անարդար են, որովհետեւ դրանք անտեսում են այն պայմանները, որոնցում կայացուել են որոշումնե–րը։ «Հեշտ է... դէպքերը տեղի ունենալուց յետոյ «քննա–դատի» դերի մէջ մտնել»։ Այս դիտարկումը կարեւոր է, որովհետեւ այն պաշտպանում է շարժումն անիրատե–սական սպասումներից եւ ընդունում է, որ սխալներն անխուսափելի են ցանկացած կենդանի գործընթացում։

Գալով մեր օրեր՝ Արցախի կորստից յետոյ, հայկա–կան քաղաքական դաշտում ձեւաւորուել է մի խօսոյթ, որը զգալիօրէն յիշեցնում է «ամբոխային տրամաբանու–թիւնը», որի դէմ պայքարում էր Քրիստափորը։ Տարած–ւում է այն միտքը, թէ մեր բոլոր խնդիրների պատճառն Արցախն է, թէ՛ ազգային պայքարը մեզ բերել է աղէտի, եւ խաղաղութեան հասնելու համար պահանջատիրական պայքարից հրաժարուելը պարտադիր պայման է։ Այս մօ–տեցումը կառուցուած է նոյն սխալ տրամաբանութեան վրայ՝ արտաքին երեւոյթը ներկայացնելով որպէս պատ–ճառ, անտեսելով խորքային գործօնները։

Եթէ կիրառենք Միքայէլեանի մեթոտաբանութիւնը, ապա պարզ կը դառնայ, որ Արցախի հարցը չէր կարող լինել մեր խնդիրների հիմնական պատճառը։ Այն ինքնին արդիւնք էր պատմական եւ աշխարհաքաղաքական հան–գամանքների ազդեցութեամբ ձեւաւորուած պայմաննե–րի։ Եթէ գոյութիւն ունեն խորքային պատճառներ՝ կապ–ուած ուժային յարաբերակցութեան, աշխարհաքաղաքա–կան շահերի եւ տարածաշրջանային հակասութիւնների հետ, դրանցից հրաժարուելը չի վերացնում վտանգը։

Նոյն կերպ, «առիթ» հասկացութեան շուրջ նրա վերլուծութիւնը թոյլ է տալիս հասկանալ, որ նոյնիսկ եթէ

Քրիստափոր... Ծար. Կարդալ էջ 6

Երբ օրէնքը զէնքի կը վերածուի

Օրէնքի գերակայութեան եւ օրէնքով կառավարելու միջեւ էական տարբերութիւն կայ։ Առաջինը ժողովրդավարական կարգի հիմքն է, իսկ երկրորդին պարագային օրէնքը կրնայ վերածուիլ իշխանութեան ձեռքին քաղաքական գործիքի։

Օրէնքի գերակայութիւն կը նշանակէ, որ բոլորը՝ նախագահէն ու վարչապետէն մինչեւ ոստիկանն ու դատաւորը, ենթակայ են միեւնոյն օրէնքնեւրուն։ Օրէնքը պէտք է հաւասարապէս կիրարկուի բոլորին նկատմամբ, իսկ անկախ դատարանները պէտք է ի վիճակի ըլլան զսպելու նաեւ պետական իշխանութիւնը։

Իսկ օրէնքով կառավարումը կը սկսի այն պահուն, երբ իշխանութիւնը օրէնքները, դատական գործընթացները, հետապնդումներն ու պետական վարչամեքենան կը գործածէ իր հակառակորդները ճնշելու կամ լռեցնելու նպատակով՝ միաժամանակ ինքզինք զերծ պահելով նոյն չափանիշներուն ենթարկուելէ։

Այս տարբերութիւնը զուտ իրաւաբանական կամ տեսական հարց չէ։ Անիկա ժողովրդավարութեան գլխաւոր փորձաքարերէն մէկն է։ Պետութիւն մը կրնայ ունենալ Սահմանադրութիւն, դատարաններ եւ ընտրութիւններ, սակայն եթէ օրէնքը ընտրովի կերպով կը կիրարկուի, ժողովրդավարական հաստատութիւնները աստիճանաբար կը կորսնցնեն իրենց իսկական բովանդակութիւնն ու նշանակութիւնը։

Հայաստանի պարագային խնդիրը օրէնքներու բացակայութիւնը չէ։ Հիմնական հարցն այն է, թէ պետական հաստատութիւնները որքանո՞վ անաչառ եւ հաւասար կերպով կը կիրարկեն զանոնք։

2018–ի Թաւշեայ յեղափոխութենէն ետք Հայաստանը ձեռնարկեց շարք մը բարեփոխումներու՝ ներառեալ փտածութեան դէմ պայքարի միջոցառումներ եւ դատական համակարգի փոփոխութիւններ։ Սակայն բարեփոխումներու մասին օրէնքներ ընդունիլը ինքնին բաւարար չէ։ Էականը այն է, թէ այդ օրէնքները գործնականին մէջ ինչպէ՞ս կը կիրարկուին. ո՞վ կը հետաքննուի, ո՞վ կը մնայ անձեռնմխելի, ո՞վ կը լռեցուի, եւ արդեօք դատարանները կրնա՞ն իշխանութեան դէմ անկախ որոշումներ կայացնել։

Մարդու իրաւունքներուն վերաբերող վերջին գեկոյցները այս առոււմով մտահոգիչ պատկեր մը կը պարզեն։ Human Rights Watch–ը բազմիցս ուշադրութիւն հրաւիրած է դատական անկախութեան խնդիրներուն, ոստիկանութեան կողմէ ենթադրեալ բռնութիւններու անբաւարար քննութեան, նախնական կալանքի չափազանց լայն կիրարկման, պետական հսկողութեան ընդլայնման եւ լրատուամիջոցներուն նկատմամբ իրաւական ճնշումներուն։

2025–ի առաջին կիսամեակին լրատուամիջոցներու պաշտպանութեամբ զբաղող կազմակերպութիւն մը արձանագրած է մամուլին նկատմամբ ճնշման 61 դէպք եւ զրպարտութեան վերաբերող 29 նոր դատական գործ։ Անոնցմէ 15–ը ներկայացուած էին պետական մարմիններու կամ գործող եւ նախկին պաշտօնատարներու կողմէ։

Այս թիւերը, անշուշտ, չեն նշանակեր, որ ամէն դատական գործ անպայման քաղաքական բնոյթ ունի, կամ թէ ամէն պետական պաշտօնատար չարաչահումի կը դիմէ։ Սակայն ընդհանուր պատկերը մտահոգիչ է։ Օրէնքը կրնայ թուղթի վրայ բոլորին համար նոյնը ըլլալ, բայց գործնականին մէջ՝ բոլորովին տարբեր կերպով կիրարկուի։

Օրինակ՝ զրպարտութեան մասին օրէնքը կրնայ ծառայել մարդոց համբաւը պաշտպանելու նպատակին։ Սակայն եթէ անոր միջոցով լրագրողները շարունակաբար դատարաններ քաշուին, նոյն օրէնքը կրնայ նաեւ վերածուիլ լռեցնելու միջոցի։ Լրագրողը կրնայ սկսիլ հարց տալ ինքն իրեն՝ արժէ՞ հետաքննել ազդեցիկ պաշտօնատար մը, եթէ հետեւանքը տարիներ տեւող դատական քաջշուք եւ ծանր ծախսեր պիտի ըլլան։

Նոյնը կը վերաբերի պետական հսկողութեան։ Անիկա որոշ պարագաներու կրնայ անհրաժեշտ ըլլալ հանրային անվտանգութեան ապահովման համար, սակայն միաժամանակ կրնայ քաղաքացիներուն մէջ վախի մթնոլորտ ստեղծել՝ զանոնք ետ պահելով բողոքելէ, կազմակերպուելէ կամ ազատօրէն արտայայտուելէ։

Նախնական կալանքն ալ ծանր յանցագործութիւններու կամ բացառիկ պարագաներու ընթացքին կրնայ անհրաժեշտ միջոց մը ըլլալ։ Սակայն երբ անիկա չափազանց երկար կը տեւէ կամ չափազանց լայն կերպով կը կիրարկուի, կրնայ փաստացի պատիժի վերածուիլ՝ դեռ անձին մեղաւորութիւնը չհաստատուած։

Այլ խօսքով՝ իշխանութեան որեւէ գործողութեան «օրինական» ձեւակերպում տալը զայն ինքնաբերաբար ժողովրդավարական չի դարձներ։ Ժողովրդավարական օրինականութիւնը կը պահանջէ նաեւ արդար դատաքննութիւն, համաչափութիւն, հաւասար վերաբերմունք եւ իշխանութենէն անկախ վերահսկողութիւն։

Միացեալ Նահանգներն ալ զերծ չեն այս վտանգէն։ Վերջին տարիներուն այնտեղ եւս լուրջ բանավէճ ծաւալած է այն հարցին շուրջ, թէ գործադիր իշխանութիւնը որքան հեռու կրնայ երթալ՝ փորձելով չրջանցել Քոնկրէսի սահմանած սահմանափակումները, դատական վերահսկողութիւնը կամ անհատական իրաւունքներու պաշտպանութիւնը։

Ամերիկեան փաստաբաններու ընկերակցութիւնը 2025–ի սկիզբը զգուշացուցած էր շարք մը քայլերու մասին, զորս օրէնքի գերակայութեան համար վտանգաւոր նկատած էր։ Անոնց շարքին էին Քոնկրէսի ստեղծած որոշ կառոյցներ առանց անոր համաձայնութեան լուծարելու փորձերը, ինչպէս նաեւ պետական պաշտօնեաներու նկատմամբ ձեռնարկուած այնպիսի քայլեր, որոնք կրնային չրջանցել անոնց օրէնքով երաշխաւորուած պաշտպանութիւնը։

Ամերիկեան սահմանադրական ընկերակցութիւնն ալ քննադատած է ներգաղթի ոլորտին մէջ այնպիսի միջոցներու գործածութիւնը, որոնք կրնան սահմանափակել արդար լսումի կամ դատական վերանայման իրաւունքը։ Նման մտահոգութիւններ արտայայտուած են նաեւ համալսարաններու եւ իրաւաբանական ընկերութիւններու նկատմամբ քաղաքական ճնշումներու առնչութեամբ։

Բնական է, որ մարդիկ անհամաձայն ըլլան կառավարութեան վարած

Օրէնքը... Ծար. կարդալ էջ 8

Վաստակաշատ ՀՄԸՄ-ականներ Եղբայր Արմէն Կէտիկեան 1994-ից Ծառայութեան եւ 2018-ից Արժանեաց Ծքանշանակիր

1.- Ե՞րբ եւ ինչպէ՞ս մուտք գործեցիք ՀՄԸՄ-ի շարքերը։

Ծնած եմ 1944–ին Հալէպ, Սուրիա։ Փոքր տարիքէս՝ Հազիւ 3 կամ 4 տարեկան, ծնողքս զիս արձանագրեց ՀՄԸՄ–ի Գայլիկութեան շարքերուն։ Աւելի ուշ յստակ կը յիշեմ գայլիկական հաւաքներս, փոխվեցակապետի կամ վեցակապետի համար տուած քննութիւններս, կը յիշեմ նաեւ մեր խմբապետներէն եղբ․ Վահէ Թիւթիւնճեանը եւ եղբայր Տիգրան Ժամկոչեանը եւ անոնց հետ կապուած յիշատակներս։ Օրին մեծ թիւով գայլիկներ Գայլիկութենէն Սկաուտական շարքերը անցան, եւ կազմուեցաւ Սկաուտական «Զի» խումբը, խմբապետական կազմ ունենալով եղբայրներ՝ Անդրանիկ Աւընեանն ու Անդրանիկ Սիւլիւքճեանը։ Աւելի ուշ գիտելիքներու պաշարս աւելնալով, ստացայ «Առաջնորդ»ի աստիճան։ Երբ նոր գայլիկներու փոխանցում պիտի ըլլար, Սկաուտական նոր «Աքլոր» խումբը հիմնուեցաւ, որուն փոխ խմբապետի պաշտօնը ինծի վստահուեցաւ։ Այդ տարիներուն նաեւ փորձած եմ մաս կազմել ՀՄԸՄ–ի փողերախումբին, ինչպէս նաեւ կողովագնդակի (պասքէթպոլի) խումբին։

1961–ին սուրիահայութեան եւ մասնաւորապէս Հալէպի մեր կազմակերպութիւններուն հանդէպ եղած հալածանքներուն որպէս արդիւնք, ստիպուեցանք ընտանեօք ձգել Հալէպը եւ հաստատուիլ Լիբանան, որմէ ետք՝ 1968–ին հաստատուեցայ Թորոնթօ, Գանատա։

2.– Կրնա՞ք ներկայացնել դրուագ մը, զոր կը յիշէք այդ օրերէն։

Սկաուտական կեանքիս ընթացքին ունեցայ շատ յիշատակներ, սակայն դրուագ ներկայացնելէ աւելի կ’ուզեմ յիշատակել այն արժէքաւոր ՀՄԸՄ–ական քոյրերն ու եղբայրները, որոնց հետ ծանօթացայ, ընկերացայ եւ շատ բան սորվեցայ․

Պատիւը ունեցայ ճանչնալու եւ իրենց հետ քաղցր յիշատակներ ունենալու, միութեան հիմնադիր անդամներէն Տիգրան Քհն. Խոյեանին, մեր Կեդրոնական առաջին վարչութեան ատենապետ նահատակ եղբ․ Վարդգէս Տէր Կաւապետեանին, որ յաճախ կ’այցելէր Գանատա եւ կը մասնակցէր Շրջանային վարչութեան լիազումար ժողովներուն․ եղբայրներ՝ Դանիէլ Դանիէլեանին, Լուտեր Մասպանճեանին, Միսաք Արզումանեանին, Գառնիկ Մկրտիչեանին, Միհրան Շիմշիրեանին, Գարլոս Սեֆէրեանին եւ շատ շատերու։

3.– Ի՞նչ պաշտօններ վարած էք միութեան մէջ։

1974–ին առաջին անգամ ՀՄԸՄ Թորոնթոյի անդամական ժողովին կողմէ ընտրուեցայ վարչական անդամ եւ ստանձնեցի ատենադպրութեան պաշտօնը։ Տարիներու ընթացքին զանազան աշխատանքներու մասնակցութիւնս բերած եմ, որպէս վարչական անդամ, ատենապետ, Մարզական յանձնախումբի ներկայացուցիչ, Սկաուտական Խորհուրդի ատենապետ եւ այլն։

Առաջին անգամ ընտրուած եմ Գանատայի Շրջանայինի վարչական 1980–81 տարեշրջանին։ Երկար տարիներ մաս կազմած եմ Շրջանային վարչական կազմերուն, որպէս ատենադպիր։ Մասնակցած եմ Գանատայի Շրջանային ներկայացուցչական բազմաթիւ ժողովներու, ինչպէս նաեւ 1983–էն սկսեալ ՀՄԸՄ–ի եօթը Պատգամաւորական ժողովներու եւ չորս Միջ–Դիւանային խորհրդաժողովներու։

ՀՄԸՄ–ի Պատգամաւորական 9–րդ ժողովին, 2007–ին, Ծաղկածոր, ընտրուեցայ Կեդրոնական վարչութեան անդամ, 4 տարուան ժամանակաշրջանով, եւ 10–րդ Պատգամաւորական ժողովին, 2011–ին, դարձեալ Ծաղկածոր, վերընտրուեցայ Կեդրոնական վարչութեան անդամ, նոյնպէս 4 տարուան ժամանակաշրջանով։

Իմ միութեանական տարիներու աշխատանքներուս որպէս զնահատանք, 1994–ին Գանատայի Շրջանային վարչութեան կողմէ պարգեւատրուեցայ ՀՄԸՄ–ի Ծառայութեան շքանշանով, իսկ 2018–ին ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչութեան կողմէ ստացայ ՀՄԸՄ–ի Արժանեաց շքանշանը։

4.– Ի՞նչ են ձեր թելադրանքներն ու մաղթանքները ներկայ ՀՄԸՄ–ականներուն։

ՀՄԸՄ–ը հայեցի դաստիարակութեան, ազգասիրութեան, հայրենասիրութեան, մարդասիրութեան ԴՊՐՈՅ է․ կարգացէք մեր Սկաուտական շարքերու Գայլիկի Վոհմակի օրէնքը, Արիին եւ Արենոյչին Խոստումը եւ դաւանանքը եւ երէց Սկաուտին եւ Պարմանուհիին Երգումը, ինչպէս նաեւ Մարգիկին խոստումը եւ կը համոզուիք, թէ որքա՛ն կարեւոր կազմակերպութիւն է ՀՄԸՄ–ը եւ ի՛նչ մեծ դեր կը խաղայ մեր ժողովուրդի կեանքին մէջ։

Իմ մաղթանքս է, որ մեր հայ ծնողները առանց վարանելու յանձնեն իրենց զաւակները ՀՄԸՄ–ին, որովհետեւ ես աչքերովս տեսած եմ, թէ ինչպէ՛ս նախկին մարզիկներ եւ սկաուտներ իրենց զաւակները կը բերեն եւ կ’արձանագրեն ՀՄԸՄ–ի շարքերուն, վստահելով անոր հայկական տաքուկ եւ ապահով մթնոլորտին։

Հարցազրոյցը վարեց ՀՈՒՐԻՆԱՆ

Տարածեցէք ձեր «Բորիպոն»ը

Հայութեան հոգին ըստ Մաղաքիա Վրդ. Օրմանեանի

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱԿԵԴՐՈՆՈՒԹԻՒՆ

Օրմանեան վարդապետ համոզուած է, թէ հայու–թեան անդամները «անհատական իրաւանց խստիւ նա–խանձախնդիր» էին եւ են։ Եւ հոսկէ կու գայ հայութեան «կեդրոնացուցիչ վարչութիւն»ներու դէմ նշկահելը։ Եւ ընդունակութիւնը՝ «արտակեդրոնական» վարչա–ձեւին (արդէն ժամանակէ մը ասդին՝ ասոր համարժէք կը գործածուի՝ «ապակեդրոնական» եզրը)։ Ըստ իրեն, հայութեան կարգ մը «թերութիւններ»ը, եւ անոնց մէջ՝ անմիաբանութիւնը մանաւանդ, իրենց «արդարացում»ը կը գտնեն հայութեան «արտակեդրոնական» հակումին մէջ։ Հայութեան անմիաբանութիւնը «բնածին» էջը, այլ «արտակեդրոնական դրութեան հակամիտութիւն»։ Այս պատճառով ալ, հայութիւնը «իրեն համար այնպիսի վարչական ձեւեր եւ մատակարարութեան ոճեր փնտոեց եւ պատրաստեց, որոց վրայ ամէնէն թեթեւ ակնարկ մը՝ անմիջապէս կը համոզէ, թէ այս ժողովուրդը, որ այդ ճամբաներով ապրեցաւ կամ կ’ապրի, չկրնար ընդունակ ըլլալ կեդրոնական ոճոյն»։

Միջնադարու հայութեան յատկութիւններուն մա–սին խօսած ատեն՝ միաբանութիւնն ալ ցոյց տուած է իբր անոնցմէ մէկը, տեսանք։ Սակայն անցեալի պատմու–թեան իր ընթերցումը՝ այն միաբանութիւնը առհասարակ հասկցած է իբրեւ ապակեդրոն հատուածներուն սեփա–կան ազգութեան ընդհանուր գգացում եւ գիտակցու–թիւն, որ «իրական» միութեան մը չէ վերածուած։ Երբ կեդրոնական մական եղած է՝ միաբանութիւնը մտածելի չէր։ Իսկ երբ կեդրոնական մական չէ եղած՝ թոհուբոհը, ապա նաեւ հայութեան գլխուն եկած փորձանքները թոյլ չեն տուած միաբանութիւնը ընդհանուր գիտակցութեան եւ ներգործական գործունէութեան վերածելու։ Անի–կա թէպէտ չէ վերածուած այնպիսի գիտակցութեան եւ գործունէութեան, բայց միջնադարեան Հայաստանի մէջ «կրաւորական եւ տոկուն միութիւն մը կայր», գրած է։ Վարդապետը այս «կրաւորական եւ տոկուն միութիւն» միտքը կապած է պատկերի մը, որ սա է. «ոչնչացնող հե–ղեղաց մէջ թաւալելով՝ անեզր ովկիանին անդնդոց մէջ չտուգանելու համար»։ Պատկերը կը յիշեցնէ նաւ մը, որ կը թաւալի ովկիանին անդունդներուն մէջ։ Եւ որքան ալ անոր նաւապետը ջանք թափէ ղեկավարելու ընթաց–քը՝ ենթակայ է ալիքներու բազմահոլով բարձրացումնե–րուն եւ յաճախադէպ անդունդներն ի վար սահումնե–րուն։ Սոյն կացութեան մէջ, հայութեան նաւը չէ խոր–տակուած, այլ իր համբերութեան մէջ մնացած է տոկուն։ «Ոչնչացնող հեղեղաց մէջ» թաւալող նաւը՝ հայութեան անխորտակ համբերութեան նաւն էր։ «կրաւորական եւ տոկուն» միութեան յաջորդած էր «իմացական միութեան

եւ առաքինական եւ ըղձական միութեան ժամանակը», զոր Օրմանեան տեսած է զինք կանխած երկու դարերուն մէջ։ Գրած է. «Քառասուն դարուց կեանք մը ունի հա–յութիւնը, բախտին ամէն արկածները կրեց, բայց չկոր–ծանեցաւ, չվախճանեցաւ, եւ յոյսն մեր հաստատուն է՝ թէ անմահ պիտի պահէ Աստուած մեր հայութիւնը աստ–եացս յաւիտենին մէջ», այսինքն՝ այս աշխարհի վրայ հայութիւնը պիտի գոյատեւէ ընդմիշտ, կամ աւետարա–նին բացատրութեամբ՝ մինչեւ վախճանը այս աշխար–հի։ Սակայն, ըստ իրեն, սկսեալ, այլեւս անբաւարար է հայութեան «իմացական», «առաքինական» եւ «ըղձա–կան» միութիւնը։ Անոր մէջ հաստատուած բաժանումնե–րը պէտք է վերնան («բաժանեալ եմք հայքս եկեղեցեաւ, բաժանեալ եմք ազգաւ, բաժանեալ եմք տեղեաւ, բաժան–եալ եմք պետութեամբ, բաժանեալ եմք լեզուաւ, բաժան–եալ եմք իշխանութեամբ...»)։ Անոնց վերացման համար, արդէն ոչ փառք ընդունող եւ ոչ ալ յիշուող «նախնիք»՝ նման «բարձրաբերձ շինուածոյ մը հիմ եղող կոշտ քա–րերու», հայութեան հանդէպ հաւատարմութեան իրենց գործերը կատարած են, ոմանք ալ անոր «չէնքին ներքին որմերը» բարձրացնելու սկսած, եւ հնչեցուցած «միու–թեան ձայնը»։ Այն ձայնը կը պահանջէ հայութեան «իրական» միութիւնը։

Այստեղ քանի մը խօսք՝ վարդապետին «իրական» միութեան հասկացողութեան մասին։

«Իմացական», «առաքինական» եւ «ըղձական» միութիւնը՝ «առաջին աստիճանն էր ներգործական գոր–ծունէութեան»։ Ատիկա այլեւս կարելի չէր «բաւական» սեպել։ Ժամանակները յառաջացած են եւ փոխուած։ Հա–յութիւնը կ’ապրի «լուսաւոր եւ քաղաքական դարու» մը մէջ։ Ուստի՝ իրմէ կը պահանջուի «իրական եւ զգա–լի, գործնական եւ հիմնական, վարչական եւ տեղական» միութիւն մը։

Միութեան պահանջքը չի վերաբերիր «բռնական» միութեան, այսինքն՝ միութեան մը, որ կ’ուզէ ջնջել անհատներուն տարբերութիւնը թէ՛ տեղով, թէ՛ քնակու–թեամբ, թէ՛ սովորութեամբ, թէ՛ կարծիքներով, թէ՛ եկե–ղեցիով եւայլն։ Ինք խորհած է, թէ հայութեան միութեան համար՝ ոչ ամենայն ինչ որ ի շինութիւն է եւ ի շահ»։ Թէ «կան կէտեր», ուր իւրաքանչիւր անհատի ազատութեան սկզբունքը պէտք է յարգուի։ Ապա, աւելցուցած է, թէ ազատութեան սկզբունքը բացարձակ պէտք չէ ըլլայ, եւ գտնուի «առաւել մեծ եւ ընդհանուր բարւոյ մը» գաղափարին ներքեւ, այլ խօսքով՝ պիտի գիտնայ ընդ–հանրական օգուտին համար՝ նոյնիսկ զոհել ինքզինք։ Ընդհանրական բարիին համար ներգործական գործու–նէութիւնը՝ «օծութիւն» մըն է, որ կը դարմանէ բոլոր



բաժանումները (այս «օծութիւն» բառը կը թելադրէ, որ այնպիսի գործունէութիւն մը Աստուածահաճոյ է)։

Գրած է. «Նոր չէ հայերուն՝ հայութեան համար աշխատիլը»։ Ընդհանրութեան համար այս գործունէ–ութիւնը՝ միաբանութեան նշան էր։ Միաբանութիւն մը՝ որ մերժեց «կեդրոնական վարչութեան ձեւ»ը, երբ անի–կա «այս կամ այն կերպով Հայաստանի մէջ հաստատել կ’ուզուէր»։ Հայութեան հոգին կ’ապստամբէր կեդրո–նաձիգ իշխանութեան մը մականին ենթարկելու բոլոր փորձերուն դէմ, որովհետեւ այն փորձերը պարզապէս «յարմար» չէին իրեն։ «Պակաս չեղան եւ չեն դէպքեր, յորս կեդրոնական եւ կեդրոնացուցիչ հոգւոյ օգուտնե–րը ակներեւ էին եւ են, բայց հայութիւնն նաեւ օգուտէն հրաժարեցաւ», ու այսպիսով՝ կարծես իր հոգիին «բնա–կան դրդմանց հպատակեցաւ»։

Ըստ իրեն, Ազգային Սահմանադրութիւնը, որ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան կողմէ ընդունուեցաւ 1860–ին եւ Օսմանեան իշխանութեան կողմէ վաւերացուեցաւ 1863–ին, հայութեան հոգիին համար «նորագիւտ ինչ» մը չէր, այլ դարաւոր ձգտումի մը իրացումը։ Հայութեան հոգին դարերու ընթացքին զայն կ’ըղձար «ինչպէս նուրբ օդը կը ձգտի ի բարձր, կամ ինչպէս՝ ծանրը կը դիմէ ի ստոր»։ Ազգային Սահմանադրութեամբ հայութեան հո–գին հասաւ իր ըղձանքի արդիւնքին, եւ «դժուարին գոր–ծոց թեւակոխելու կարողութիւն ունեցաւ»…

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ. (Ծարունակելի 3)

Սփիւռքի Ազգային Զօրաշարժի խորհրդածողովը գործարկած է իր նոր կայքէջը

Սփիւռքի Ազգային Զօրաշարժի խորհրդածողովը գործարկած է իր նոր կայ–քէջը՝ spyurkconference.org, որ մէկտեղուած ձեւով կը ներկայացնէ խորհրդածողովի աշխատանքները, քննարկումները, ելույթները, յայտարարութիւնները եւ յաջորդող նախաձեռնութիւնները։

Խորհրդածողովը տեղի ունեցած էր Փարիզի մէջ, 11–12 ապրիլ 2026–ին՝ Հա–յաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի 26 երկիրներէ ժամանած աւելի քան 150 մտա–ւորականներու, քաղաքական, հանրային եւ համայնքային գործիչներու մաս–նակցութեամբ։ Յուլիսին նաեւ տեղի ունեցած էր առցանց ժողով՝ շարունակելու համար Սփիւռքի ապագային, կազմակերպման եւ համահայկական ներուժի օգտա–գործման վերաբերող քննարկումները։

Նոր կայքէջին մէջ տեղ գտած են խորհրդածողովի օրակարգը, ելույթները, կլոր սեղաններու քննարկումներուն համառօտագիրերը, յայտարարութիւնները, մամուլի արձագանգները եւ յաջորդող աշխատանքներուն վերաբերող նիւթեր։ Կազմակերպիչները յատուկ կարեւորութիւն կու տան կլոր սեղաններու համառօ–տագիրերուն, որոնք նպատակ ունին տարբեր շրջանակներու եւ մասնագէտներու տեսակէտներն ու առաջարկները համախմբելու եւ զանոնք հետագայ աշխատանքի համար համակարգուած քաղաքական ու ռազմավարական ուղղութիւններու վե–րածելու։

Խորհրդածողովին ընթացքին գումարուած չորս կլոր սեղանները քննեցին հետեւեալ նիւթերը (բոլորին համառօտագիրերը՝ այստեղ)․

- Սփիւռքի ռազմավարական դերը ազգային հիմնախնդիրներու լուծման մէջ. Ո՞րն է Սփիւռքի քաղաքական օրակարգը
- Ազգային արժէքներու եւ Հայ եկեղեցւոյ կարեւորութիւնը՝ Սփիւռքի մէջ հայկական ինքնութեան պահպանման համար. Նոր իրավիճակի մարտահրաւէրներ
- Հայաստան–Սփիւռք յարաբերութիւններու հիմնահարցեր եւ հորիզոններ
- Սփիւռքի զօրաշարժ եւ վերաշխուժացում յանուն համազգային նպատակ–ներու

Խորհրդածողովի Համադրող Կազմը կը շեշտէ, որ Սփիւռքի ապագայի ձե–ւաւորումը կը պահանջէ կազմակերպուած երկխօսութիւն, ազգային առաջնա–հերթութիւններու շուրջ համախոհութիւն եւ այդ համախոհութիւնը գործնական աշխատանքի վերածելու կարողութիւն։ Նոր կայքէջը կը նախատեսուի զարգացնել իբրեւ այդ ուղղութեամբ հրապարակումներու, քննարկումներու եւ համագործակ–ցութեան հարթակ։

Քրիստափոր… Սկիզբը կարդալ էջ 4

Հայ ժողովուրդը հրաժարուի իր ազգային պահանջներից, դա չի կանխի նոր սպառնա–լիքները։ «Երբ կան հիմնական պատճառներ, «առիթ» կամ «պատրուակ» երբեք չեն պակասի»։ Այս միտքը յատկապէս արդիական է այսօր, երբ հասարակութեանը փորձում են համոզել, որ զիջումները կարող են ապահովել խաղաղութիւն։ Սակայն Միքայէլեա–նի տրամաբանութեամբ նման մօտեցումը հիմնուած է իրականութեան սխալ ըմբռնման վրայ։

Այս իրավիճակում Քրիստափորի «Յարատեւ կռուի» գաղափարը ստանում է նոր նշանակութիւն։ Այն չի սահմանափակում գինուած պայքարով, այլ ներառում է բոլոր այն միջոցները, որոնց միջոցով կարելի է պաշտպանել ազգային շահերը։ Դա կարող է լինել՝ դիւանագիտական գործունէութիւն, միջազգային հարթակներում պայքար, մշա–կութային ինքնութեան պահպանում, տնտեսական ամրապնդում։ Սակայն այս ամէնի հիմքում պէտք է լինի նոյն սկզբունքը՝ չհրաժարուել պայքարից եւ չհաշտուել պար–տութեան հետ։

Հայկական հանրութիւնը եւ քաղաքական դաշտը պէտք է հասկանան վերջապէս, որ Հայաստանի պետականութեան եւ ինքնիշխանութեան պահպանումը հնարաւոր չէ առանց քրիստափորեան մտածողութեան։ Միքայէլեանի տեսութիւնները ցոյց են տա–լիս, որ իրական անվտանգութիւնը եւ պետութեան ուժը հնարաւոր է ապահովել միայն այն դէպքում, երբ կայ հաստատակամ կամք եւ պատրաստակամութիւն՝ պաշտպանելու ազգային շահերը, պահպանելու պետականութիւնը եւ ապահովելու ժողովրդի անվ–տանգութիւնն ու զարգացումը։

